



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ ՈՐՈՇՈՒՄ N 11/1-Ա

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ
ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԼՅՈՒԴՄԻԼԱ ԱՇՈՏԻ
ՉԱԼՅԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՈՒՄԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լյուդմիլա Աշոտի Չալյանի դիմումը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Ս.Գրիգորյանի ներկայացրած բնութագիրը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական դեպարտամենտի ղեկավարի միջնորդագիրը, «Դատական ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները և ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական օրենսգրքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի 24-րդ կետով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Թույլատրել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավորի դատական նիստերի քարտուղար Լյուդմիլա Աշոտի Չալյանին շարունակելու պաշտոնավարումը մինչև 2014թ. հուլիսի 25-ը:

ԼՂՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ն.ՆԱՐԻՄԱՆՅԱՆ

10 հուլիսի 2013թ.
ք. Ստեփանակերտ